Խ.ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2025-2026 ՈՒՍՏԱՐԻ ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

011401.13.6 «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավր և մագիստրատուրա:
Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է. շրջանավարտը ստանում է մանկավարժության բակալավր, ուսուցիչ որակավորում:
Բաժին կարող են ընդունվել նրանք, ովքեր ունեն ընդհանուր միջնակարգ կրթություն և երաժշտական պատրաստականություն, որը համապատասխանում է ընդունելության քննությունների պահանջներին:

<u>Դիմորդը պետք է հանձնի մասնագիտությունից երկու քննություն:</u>

1. ԵՏՍ (բանավոր) - ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (բանավոր) և ՍՈԼՖԵՋԻՈ (բանավոր)
2. ՆԵՍԿ և երգ - ՆՎԱԳԱՐԱՆՆԵՐՈՎ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄ ԵՎ ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ

ՔՆՆՈՒԹՅԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

<u>1-ին քննություն</u> «Երաժշտության տեսություն» (բանավոր) և «Սոլֆեջիո» (բանավոր)

<u>1. ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ (բանավոր)</u>

Երաժշտության տարրական տեսության դասընթացի շրջանակներում (Ռ.Աթայան, Տ.Տեր-Մարտիրոսյան, Ի.Սպոսոբին և այլն): Երաժշտական հնչյունը և նրա հատկանիշները: Հնչյունների անունները, նրանց նշանակումը: Տեմպերացիա: Ալտերացիայի նշանները: Խրոմատիկ և դիատոնիկ կիսատոները և տոները: Տևողության երկարացման միջոցները: Մետր, ռիթմ, տեմպ: Լադ, տոնայնություն: Միջնադարյան ժողովրդական երաժշտության լադերը (դորիական, լիդիական, մեքսոլիդիական, փռյուգիական և այլն): Ինտերվալներ: Ինտերվալների շրջվածքները, ինտերվալները լադերում: Կայուն և անկայուն ինտերվալները որոշակի լադի և տոնայնության մեջ: Նրանց լուծումը: Մեծացրած և փոքրացրած ինտերվալներ և նրանց լուծումը: Ակորդներ: Ակորդների տեսակները: Ակորդները լադերում: Խրոմատիզմ: Ներլադային ալտերացիա: Շեղում: Մոդուլացիա: Համադրություն: Տոնայնությունների ազգակցությունը: Մեղեդային շարժման տեսակները: Սեկվենցիաներ: Երաժշտական լեզվի կառուցման տարրերը: Փոխադրություն: Մելիզմներ:

<u>2. Սոլֆեջիո (բանավոր)</u>

1. Բախումով թերթից ընթերցել մեղեդիներ, լսողությամբ որոշել երաժշտական լեզվի տարրերը, մեղեդու ինտերվալային կառուցվածքը, տոնայնության մեջ խրոմատիկ աստիճանի փոփոխության պատճառները:
2. Երգել ինտերվալներ տոնայնությունում և տրված հնչյունից (ինչպես նաև եռատոներ, բնորոշ

ինտերվալներ), երգել եռահնչյունները շրջվածքներով, փոքրացրած, մեծացրած եռահնչյուններ, դոմինանտ սեպտակորդը և երկրորդ աստիճանի սեպտակորդը շրջվածքներով, յոթերորդ աստիճանի սեպտակորդը՝ փոքր և փոքրացված:

3. Լսողությամբ որոշել ինտերվալները և ակորդները, տոնայնության մեջ դիատոնիկ և խրոմատիկ աստիճանների փոփոխությունները, ակորդների հաջորդականությունները:
4. Երգել ժողովրդական երաժշտության լադերը, մաժոր և մինոր գամմաները (բնական, հարմոնիկ և մելոդիկ):

2-րդ քննություն«Նվագարաններով երաժշտական ստեղծագործությունների կատարում և երգեցողություն»

ԴԱՇՆԱՄՈՒՐ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղծագործություն տրված ցանկից

Էտյուդ (դժվարության նվազագույն աստիճանը՝ Չերնի «Էտյուդներ» ստ. 299):

Պոլիֆոնիկ ստեղծագործություն (դժվարության նվազագույն աստիճանը՝Բախ «Եռաձայն ինվենցիա»):

Մեծ կտավի ստեղծագործություն (սոնատի 1-ին կամ 2-րդ և 3-րդ մասերը) դժվարության նվազագույն աստիճանը՝ Հայդնի, Մոցարտի սոնատները:

Միջին դժվարության պիես (Բաբաջանյան «Էլեգիա»):

ՋՈՒԹԱԿ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղծագործություն տրված ցանկից

Էտյուդ (դժվարության նվազագույն աստիճանը՝ Կրեյցեր «Էտյուդներ»):

Մեծ կտավի ստեղծագործություն (կոնցերտի 1-ին կամ 2-րդ և 3-րդ մասերը) դժվարության նվազագույն աստիճանը՝ Վիոտտի կոնցերտ թիվ 23; սոնատի 1-ին, 2-րդ կամ 3-րդ, 4-րդ մասերը) դժվարության նվազագույն աստիճանը՝ Հենդելի 6 սոնատները:

Երգային կամ վիրտուոզ բնույթի պիես:

ԱԿՈՐԴԵՈՆ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղխծագործություն տրված ցանկից Էտյուդ:

Պոլիֆոնիկ ստեղծագործություն:

Մեծ կտավի ստեղծագործություն:

Միջին դժվարության պիես:

ՔԱՆՈՆ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղծագործություն տրված ցանկից Գամմաներ կամ էտյուդ:

Մեծ կտավի ստեղծագործություն (կոնցերտ, վարիացիաներ): Վիրտուոզ բնույթի պիես:

Մեղեդային բնույթի պիես:

ՇՎԻ - ՖԼԵՅՏԱ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղծագործություն տրված ցանկից

Գամմաներ:

Էտյուդ:

Պիես:

ԿԻԹԱՌ

Դիմորդը պետք է կատարի 2 ստեղծագործություն տրված ցանկից
Էտյուդ:
Սոնատ կամ ռոնդո կամ վարիացիա:
Պիես:

ԵՐԳԵՑՈՂՈՒԹՅՈՒՆ (Ձայնային տվյալների ստուգում). երգել մեկ երգ առանց նվագակցության և մեկ երգ նվագակցությամբ (հնարավոր է նաև սեփական նվագակցությամբ՝ օրինակ Կոմիտասի «Կաքավի երգը», Մոցարտի «Գարունը», Դ.Կաբալևսկու «Բարի գիշերը»):

Երգեցողության գնահատականը հաշվի է առնվում նվագարանով կատարած ստեղծագործությունների ընդհանուր գնահատման ժամանակ:

011401.13.6 «ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

ՍՈԼՖԵՋԻՈ ԵՎ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

1-7 միավոր	դիմորդը ճիշտ չի պատասխանում ոչ մի հարցի:
8 միավոր	ա) դիմորդը ճիշտ չի պատասխանում երաժշտության տեսության հարցերին: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 4-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է սխալներով (ինտոնացիոն և ռիթմական):
9 -10 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին սխալներով: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 5-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է ոչ մաքուր:
11-12 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին սխալներով: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 6-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է ոչ մաքուր:
13-14 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 7-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր, ոչ վարժ:
15-16 միավոր	ա) դիմորդը ճիշտ է պատասխանում երաժշտության տեսության հարցերին: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 8-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր:
17-18 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին առանց սխալի: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 9-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր ինտոնացիայով:
19-20 միավոր	ա) դիմորդը պատասխանում է երաժշտության տեսության հարցերին առանց սխալի: բ) դիմորդը 10 ակորդից ճիշտ է որոշում 10-ը: գ) դիմորդը նոտաներով երգում է մաքուր և վարժ: